

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2006 թվականի նոյեմբերի 27-ին

1370 **ՕՁՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ**

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքով կարգավորվում են օգոնային շերտը քայքայող նյութերի՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրության, ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման նկատմամբ սահմանափակումները և դրանց հետ կապված հարաբերությունները՝ «Օգոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի և «Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության շրջանակներում կնքված միջազգային համապատասխան պայմանագրերը վավերացրած երկրների հետ:

Հոդված 2. Օգոնային շերտը քայքայող նյութերի մասին օրենսդրությունը

Օգոնային շերտը քայքայող նյութերի՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրության, ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման նկատմամբ սահմանափակումներն ու դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով, «Մթնոլորտային օդի պահպանության մասին»² Հայաստանի Հանրապետության օրենքով, միջազգային պայմանագրերով, սույն օրենքով և իրավական այլ ակտերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

օգոնային շերտ՝ մոլորակի սահմանամերձ շերտից վերև գտնվող մթնոլորտային օգոնի շերտը.

օգոնային շերտը քայքայող նյութեր՝ քիմիական նյութեր, որոնք ցուցաբերում են կամ ունակ են ցուցաբերելու ոչ բարենպաստ ազդեցություն օգոնային շերտի վրա՝ մաքուր վիճակում կամ խառնուրդներում, որոնց միավոր զանգվածում օգոն քայքայող մաքուր նյութերի քանակը 1 տոկոսից ավելի է.

կողմ հանդիսացող երկիր՝ երկիր, որը վավերացրել է «Օգոստոսյան շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի և «Օգոստոսյան շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության շրջանակներում կնքված միջազգային համապատասխան պայմանագրերը.

կողմ չհանդիսացող երկիր՝ երկիր, որը չի վավերացրել «Օգոստոսյան շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիայի և «Օգոստոսյան շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության շրջանակներում կնքված միջազգային համապատասխան պայմանագրերը.

ընդհանուր չափաքանակ (քվոտա)՝ օգոստոսյան շերտը քայքայող նյութերի՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման թույլատրելի ընդհանուր քանակությունն՝ ըստ տարիների.

անհատական չափաքանակ (քվոտա)՝ յուրաքանչյուր ներմուծողին օգոստոսյան շերտը քայքայող նյութերի (նյութի) ներմուծման թույլատրվող քանակություն ամեն տարվա համար.

առաքման թույլտվություն՝ օգոստոսյան շերտը քայքայող նյութերի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման համար ներմուծող կամ արտահանող կամ տարանցիկ փոխադրում իրականացնող հայտատուին տրամադրվող փաստաթուղթ, որով թույլատրվում է այդ նյութերի ներմուծումը կամ արտահանումը կամ տարանցիկ փոխադրումը, եթե նման գործարքը համապատասխանում է սույն օրենքի պահանջներին.

հայտատու՝ օգոստոսյան շերտը քայքայող նյութերի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման գործարք կատարելու նպատակով առաքման թույլտվություն ստանալու մասին լիազոր պետական մարմին հայտ ներկայացրած իրավաբանական ու ֆիզիկական անձիք.

հայտ՝ օգոստոսյան շերտը քայքայող նյութերի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման գործարք կատարելու մասին դիմում, որը ներառում է ներմուծման, արտահանման կամ տարանցիկ փոխադրման երկրների անվանումները և տվյալներ հայտատուի և նրա կողմից ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման ենթակա օգոստոսյան շերտը քայքայող նյութերի անվանումների, քանակների, գործարքի իրականացման ժամկետների մասին:

Գ Լ ՈՒ Խ 2

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՈՐԾԱԾՍԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 4. Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները

Օգոստոսյան շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են.

- 1) օգոստոսյան շերտը քայքայող նյութերի ցանկի հաստատումը.
- 2) օգոստոսյան շերտը քայքայող նյութերի ներմուծման ընդհանուր չափաքանակների սահմանումը.
- 3) օգոստոսյան շերտը քայքայող նյութերի ներմուծման անհատական չափաքանակների սահմանման կարգի հաստատումը.
- 4) առաքման թույլտվության տրամադրման կարգի ու ձևի հաստատումը.
- 5) օգոստոսյան շերտը քայքայող նյութերի ներմուծմանը, արտահանմանը և տարանցմանը վերաբերող ենթաօրենսդրական ակտերի ընդունումը.

6) օգոնային շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում քաղաքականության իրականացման ապահովումը:

Հոդված 5. Լիազոր պետական մարմնի իրավասությունները

Օգոնային շերտը քայքայող նյութերի գործածման բնագավառում լիազոր պետական մարմնի իրավասություններն են՝

- 1) օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման վերաբերյալ իրավական ակտերի մշակումը.
- 2) օգոնային շերտը քայքայող նյութերի քանակությունների հաշվառումը.
- 3) օգոնային շերտը քայքայող նյութերի անհատական չափաքանակների սահմանումը.
- 4) օգոնային շերտը քայքայող նյութերի առաքման թույլտվությունների տրամադրումը՝ ներկայացված հայտերի հիման վրա.
- 5) օգոնային շերտը քայքայող նյութերի ոլորտում քաղաքականության մշակումը.
- 6) օգոնային շերտը քայքայող նյութերի գործածման նկատմամբ վերահսկողությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով :

Գ Լ ՈՒ Խ 3

ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 6. Օգոնային շերտը քայքայող նյութերի գործածման նկատմամբ արգելքները

Հայաստանի Հանրապետությունում արգելվում է՝

1. Օգոնային շերտը քայքայող նյութերի արտադրությունը.
2. Օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծումը կողմ չհանդիսացող երկրներից և արտահանումն այդ երկրներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով օգոնային շերտը քայքայող նյութերի տարանցիկ փոխադրումը, եթե այդ նյութերն առաքվել են կողմ չհանդիսացող երկրից կամ առաքվում են կողմ չհանդիսացող երկիր:

Հոդված 7. Օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման ընդհանուր չափաքանակների սահմանման սկզբունքներն ու կարգը

1. Հայաստանի Հանրապետության տարածք օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման ընդհանուր չափանաքանակները սահմանվում են յուրաքանչյուր տարվա համար, ոչ ավելի, քան միջազգային պայմանագրերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համար նախատեսված չափաքանակների:
2. Օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման ընդհանուր չափանաքանակները սահմանվում են մինչև միջազգային պայմանագրերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համար նախատեսված չափաքանակների սպառվելը:
3. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարվա համար օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման ընդհանուր չափանաքանակները սահմանում է լիազոր պետական մարմնի ներկայացմամբ ոչ ուշ, քան մինչև նախորդ տարվա հունիսի 30-ը:

Հոդված 8. Օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման անհատական չափաքանակների սահմանման կարգը

1. Օգոնային շերտը քայքայող մեկից ավելի նյութերի ներմուծման համար ներկայացված հայտի դեպքում դրանց թույլատրելի քանակները սահմանվում են մեկ անհատական չափաքանակով՝ ըստ առանձին նյութերի:

2. Օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման համար սահմանված անհատական չափաքանակների հիման վրա լիազոր պետական մարմինը հայտատուին տրամադրում է առաքման թույլտվություն:

Օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման համար հայտը մերժվում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, ինչպես նաև ներմուծողին, սույն օրենքի համաձայն, տրամադրված անհատական չափաքանակի սպառման կամ թույլտվության ժամկետի ավարտման դեպքում:

3. Հայտատուն իրավունք ունի սահմանված անհատական չափաքանակից ոչ ավելի քանակության օգոնային շերտը քայքայող նյութեր ներմուծել Հայաստանի Հանրապետության տարածք տվյալ տարվա ընթացքում՝ միանվագ կամ մաս-մաս՝ ներմուծման յուրաքանչյուր ժամանակահատվածի և ներմուծվող օգոնային շերտը քայքայող նյութերի քանակության մասին գրավոր տեղյակ պահելով լիազոր պետական մարմնին: Տեղյակ չպահելու դեպքում ներմուծողը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

4. Առաքման թույլտվություն ստացած հայտատուն մինչև հաջորդ տարվա փետրվարի 25-ը պետական լիազոր մարմին է ներկայացնում օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին տարեկան հաշվետվություն:

5. Օգոնային շերտը քայքայող նյութերի առաքման թույլտվության համար գանձվում (վճարվում) է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

Օգոնային շերտը քայքայող նյութերի առաքման թույլտվությունը հայտատուին տրամադրվում է պետական տուրքի անդորրագրի առկայության դեպքում:

Հոդված 9. Օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծումը, արտահանումը և տարանցիկ փոխադրումը

1. Մաքսային մարմիններն օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծումը, արտահանումը և տարանցիկ փոխադրումը թույլատրում են Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատված ձևի և տրամադրման կարգի հիման վրա ստացած առաքման թույլտվության առկայության դեպքում:

2. Օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման մասին մաքսային մարմինները տեղեկատվություն են ներկայացնում լիազոր պետական մարմնին տվյալ գործարքի իրականացման ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, որը ներառում է.

1) ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման մասին տվյալները.

2) ներմուծված կամ արտահանված կամ տարանցիկ փոխադրման ենթարկված օգոնային շերտը քայքայող նյութերի քանակները և իրականացված գործարքի ժամանակահատվածը.

3) արտահանման և ներմուծման երկրների անվանումները:

Գ Լ ՈՒ Խ 4
ՕՉՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Հոդված 10. Օգոնային շերտը քայքայող նյութերի հաշվառման կարգը

1. Հաշվառման ենթակա են՝

1) օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման համար սահմանված ընդհանուր չափանաքանակները՝ ըստ առանձին նյութերի.

2) օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման գործարք կատարելու մասին հայտերը.

3) օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման սահմանված անհատական չափանաքանակները և դրանց մնացորդային քանակությունները՝ ըստ առանձին նյութերի.

4) օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման առաքման թույլտվությունները

5) օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին տարեկան հաշվետվությունները:

2. Սույն հոդվածի առաջին մասի 1-5-րդ կետերով սահմանված օգոնային շերտը քայքայող նյութերի քանակություններն ու փաստաթղթերը հաշվառում է լիազոր պետական մարմինը, իսկ 4-րդ կետով սահմանված փաստաթղթերը հաշվառում են նաև մաքսային մարմինները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Գ Լ ՈՒ Խ 5
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 11. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու դեպքում

Սույն օրենքով սահմանված պահանջները խախտողները պատասխանատվություն են կրում՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Հոդված 12. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ
2006թ. դեկտեմբերի 18
Երևան

Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ